


1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)

ԳՅ սպառողական շուկան (մանրածախ արանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը) 2000թ. հունվարին

	2000թ. հունվարի փաստացի ծավալը, մլն. դրամ	2000թ. հունվարը տոկոսներով 1999թ. հունվարի նկատմամբ	Տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ	
			2000թ. հունվար	1999թ. հունվար
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	38301.7	110.7	100	100
<i>այդ թվում՝</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	26456.0	115.0	69.1	66.9
բնակչությանը մատուցված ծառայություններ	11845.7	101.4	30.9	33.1

ԳՅ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները (տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)



Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2000թ. հունվարին նկատվել է սպառողական շուկայի ծավալի աճ (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով 10.7%) և դրանում ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը 2.2 տոկոսային կետով ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր

2000թ. հունվարին ԳՅ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է մոտ 26.5 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 15.0 %-ով:

ԳՅ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2000թ. հունվարին


	Ապրանքաշրջա-	Ապրանքաշրջանառության
--	--------------	----------------------

1. Ի Ի Մ Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

	նառության ծավալը, մլն. դրամ	տեսակարար կշիռը տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը <i>այդ թվում՝</i>	26456.0	100
խանութներ	8354.1	31.6
հանրային սննդի օբյեկտներ	167.3	0.6
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	8100.0	30.6
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2332.5	8.8
կրպակներ (տաղավարներ)	7502.1	28.4

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների 2000թ. հունվարին

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)



Ինչպես երևում է գծապատկերից, 2000թ. հունվարին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է կազմել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներ) և կրպակներում (տաղավարներ) իրականացվող առևտուրը՝ 90.6 % (23956.2 մլն. դրամ), իսկ 9.4 %-ը՝ (2499.8 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի օբյեկտներում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին:

Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Գործող սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներ) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա 2000թ. հունվարին ապրանքաշրջանառության ծավալը, փաստացի գներով, կազմել է 8100.0 մլն. դրամ:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառներ) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2000թ. հունվարին


	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում տոկոսով՝	
		պարենային ապրանքներ	ընդհանուրի նկատմամբ ոչ պարենային ապրանքներ
Արարատ	50.7	38.5	61.5
Արմավիր	94.3	63.5	36.5
Գեղարքունիք	169.8	25.7	74.3
Լոռի	111.2	52.5	47.5
Կոտայք	174.9	54.0	46.0
Շիրակ	190.2	0.9	99.1
Սյունիք	11.2	-	100.0
Տավուշ	132.6	68.3	31.7
ք. Երևան	7165.1	13.6	86.4

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում տոկոսով՝	ընդհանուրի նկատմամբ
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Ընդամենը հանրապետությունում	8100.0	16.6	83.4

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 2000թ. հունվարին կազմել է 83.4 %, իսկ պարենային ապրանքներինը՝ 16.6 %:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)

(տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



Ինչպես երևում է գծապատկերից, 2000թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում նկատվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 1.8 տոկոսային կետով: Վերջինս արդյունք է հանրապետության մյուս մարզերի սպառողական ապրանքների շուկաներում առևտրի աշխուժացման:

2000թ. փետրվարի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 19229.5 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 80 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվարին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 8.8 %-ը կամ 2332.5¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2000թ. հունվարին հանրապետությունում ըստ 2900 արտադրական և սպասարկման ոլորտի առևտրային կազմակերպություններից ստացված հաշվետվության տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկման, բնակչությանը մատուցված ծառայությունների

ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է 11845.7 մլն.դրամ, որը 1999թ. հունվարի նկատմամբ համադրելի գներով կազմել է 101.4%: Ծառայությունների ինդեքսը անցած տարվա հունվարի նկատմամբ կազմել է 102.0%: Ծառայությունների սակագներն աճել են 2.0%-ով, այդ թվում՝ կրթության՝ 25.6%-ով, մշակույթի՝ 7.8%-ով, առողջապահության՝ 4.4%-ով, կենցաղային՝ 1.0%-ով, կապի՝ 0.4%-ով: Ծառայությունների մնացած տեսակների գծով նկատվում է սակագների նվազում կամ նույն մակարդակի պահպանում:

2000թ. հունվարին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն բնակկոմունալ ծառայությունները՝ 34.3% (այդ թվում բնակչությանն էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների բաժինը կազմում է 27.0%), մարդատար տրանսպորտի ծառայությունները՝ 28.2% (այդ թվում օդային տրանսպորտի բաժինը կազմում է 23.4%), կապի՝ 17.3%, կրթության համակարգի՝ 3.5%, առողջապահության՝ 1.8%, իրավական և բանկային հիմնարկների՝ 1.5%, կենցաղային ծառայությունների՝ 1.2%, մշակույթի՝ 0.6%, մնացած ծառայությունները՝ 11.6%:

Այլ ծառայությունների տեսակարար կշիռը անցած տարվա համեմատ աճել է 3.7%-ով: 2000թ. հունվարին 30 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալներով, ծառայությունների ծավալը կազմել է 87.9մլն.դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.7%: